<u>Դատական ծախսերը.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.4 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որպես օրենքով սահմանված պետական տուրք՝ հայցվորի կողմից նախապես վճարվել է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև այն, որ հայցը ենթակա է բավարարման, Դատարանը գտնում է, որ Հիմնադրամից հօգուտ Ընկերության պետք է բռնագանձել 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից կատարված դատական ծախսի փոխհատուցում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1/. «Թագ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, բավարարել.

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/105» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կայացված որոշումը մասնակի՝ «Թագ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, ճանաչել անվավեր:

2/. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամից հօգուտ «Թագ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից կատարված դատական ծախսի փոխհատուցում:

3/. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում, կատարում ենթադրող մասով վճիռը կարող է կատարվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ Հովհաննես Ղազարյան